ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր գիտությունն է համալիր կերպով ուսումնասիրում երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով :**

1) երկրագրությունը
2) քարտեզագրությունը
3) երկրաբանությունը
4) լանդշաֆտագիտությունը

2 **Ստորև բնութագրումով ո՞ր մեթոդին է վերաբերում:**

Քանակական մեթոդներից մեկն է: Այն առավել լայն կիրառում ունի հատկապես հասարակական աշխարհագրության մեջ: Նրա հիմնական նպատակը քանակական ելակետային տվյալների հավաքումը, մշակումը և վերլուծությունն է: Ո՞ր մեթոդն է.

1) մաթեմատիկական
2) վիճակագրական
3) քարտեզագրական
4) օդատիեզերական

3 **Ստորև թվարկված ուղություններից ո՞րն է համապատասխանում 45° ազիմուտին:**

1) հարավ-արևելք
2) հարավ-արևմուտք
3) հյուսիս-արևելք
4) հյուսիս-արևմուտք

4 **Ստորև թվարկված մասշտաբներից որո՞նք են համապատասխանում միջին մասշտաբի քարտեզներին:**

1) 1 : 10 000 — 1 : 200 000
2) 1 : 200 000 — 1 : 1000 000
3) 1 : 50 000 — 1 : 100 000
4) 1 : 1000 000 — 1 : 2000 000

5 **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում նստվածքային օրգանական ծագման ապար:**

1) կավ
2) ավազ
3) տուֆ
4) տորֆ

6 **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Մերձբևեռային լայնությունները քարտեզագրելու համար օգտագործում են գլանային պրոյեկցիան։
2) Աղավաղումների բնույթով պայմանավորված քարտեզագրական պրոյեկցիաները՝ լինում են հավասարամեծ, հավասարանկյուն և ազատ։
3) Որակական ֆոնի կիրառման դեպքում պատկերվող տարածքի տարբեր մասեր ներկվում են տարբեր գույներով, կամ ներկվում են ըստ որևէ հատկանիշի։
4) Ծովային հոսանքները շարժման գծերով են պատկերվում քարտեզի վրա։

7 **Ո՞ր ժամանակաշրջանին է համապատասխանում անթրոպոգեն փուլը։**

1) պալեոզոյան
2) մեզոզոյան
3) պրոտերոզոյան
4) կայնոզոյան

8 **Ինչպիսի՞ արագությամբ է Հարավային Ամերիկան հեռանում Աֆրիկայից։**

1) 1-2 սմ/տարի
2) 3-4 սմ/տարի
3) 7-8 սմ/տարի
4) 9-10 սմ/տարի

9 **Ուսումնասիրությունների համաձայն երկրագունդը տարեկան մոտավորապես որքա՞ն ջուր է կորցնում։**

1) 0,1 կմ^3
2) 0,2 կմ^3
3) 0,3 կմ^3
4) 0,5 կմ^3

10 **Մթնոլորտի ձևավորման անթթվածնային փուլի ժամանակ ո՞ր գազի քանակն է գերազանցել 90%-ը։**

1) ջրային գոլորշի
2) ազոտ
3) ածխաթթու գազ
4) օզոն

11 **Ո՞ր դարաշրջանում են առաջացել ձվածին կաթնասունները։**

1) Արխեյան
2) Կայնոզոյան
3) Պալեոզոյան
4) Պրոտերոզոյան

12 **Ո՞ր դարաշրջանում է ցամաքում ձևավորվել հողային ծածկույթը.**

1) Արխեյան
2) Կայնոզոյան
3) Պալեոզոյան
4) Պրոտերոզոյան

13 **Ո՞ր աստիճանի ջուրն է ամենախիտը։**

1) +4˚C
2) +5˚C
3) +6˚C
4) +7˚C

14 **Ո՞ր զոնայում է մարդը մեծամասամբ զբաղվում ձկնորսությամբ և եղջերվապահությամբ։**

1) տունդրա
2) տայգա
3) անապատ
4) սավաննա

15 **Ո՞ր զոնայում են մեծամասամբ գերակշռում սևահողերը։**

1) տունդրա
2) տափաստան
3) անապատ
4) սավանա

16 **Ո՞ր նեղուցուցով են բաժանվում իրարից Աֆրիկան ու Եվրոպան։**

1) Մոզամբիկի
2) Ջիբրալթարի
3) Մալակկայի
4) ԼաՄանշի

17 **Ո՞ր թերակղզին է Աֆրիկայում։**

1) Ապենինյան
2) Ֆլորիդայի
3) Առնհեմլենդ
4) Սոմալի

18 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ավստրալիան չունի արտեզյան ավազան։
2) Ավստրալիան ամենաչոր մայրցամաքն է։
3) Ավստրալիան հարուստ է լճերով։
4) Ավստրալիայի ամենախոշոր գետը Օբն է։

19 **Ո՞ր լեռնագագաթն է գտնվում Անտարկտիդայում։**

1) Վինսոն
2) Կոսցյուշկո
3) Մոնբլան
4) Կիլիմանջարո

20 **Ո՞ր ջրվեժն է Հարավային Ամերիկայում։**

1) Լիվինգստոն
2) Վիկտորիա
3) Նիագարա
4) Անխել

21 **Ո՞ր կենդանին է ապրում Հյուսիսային Ամերիկայում։**

1) լամա
2) կենգուրու
3) բիզոն
4) բադակտուց

22 **Ո՞ր հրաբուխը *չի* գտնվում Եվրասիայում։**

1) Էտնա
2) Օրիսաբա
3) Հեկլա
4) Կրակատաու

23 **Ո՞ր դաշտավայրը *չի* գտնվում Եվրասիայում։**

1) Մեկոնգի
2) Միջագետքի
3) Օրինոկոյի
4) Թուրանի

24 **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Ինքնիշխան պետությունը քաղաքականորեն կազմակերպված տարածք է, որը կառավարվում է դրա վրա ձևավորված ինքնիշխան կառավարության կողմից և ճանաչված է միջազգային հանրության մեծ մասի կողմից։
2) Պետական սահմանը կարող է լինել լեռնագրական, եթե անցկացված է լեռների ջրբաժաններով կամ գետերի հունով։
3) Պետական սահմանը կոչվում է աշխարհագրական, եթե անցնում է միջօրեականով կամ զուգահեռականով։
4) Անտարկտիկայի ջրերը մտնում են Ավստրալիայի տնտեսական գոտու մեջ։

25 **Ո՞րը միգրացիայի տեսակ *չէ։***

1) մշտական
2) ժամանակավոր
3) սեզոնային
4) քաղաքական

26 **Ո՞ր ռասայի ներկայացուցիչներն են առանձնանում սև, կոշտ և ուղիղ մազերով, մաշկի դեղնավուն գույնով, տափակ դեմքով, խիստ արտահայտված այտոսկրերով, աչքի նեղ բացվածքով և վերին կոպի խիստ զարգացած ծալքով։**

1) ավստրալոիդ
2) եվրոպեոիդ
3) մոնղոլոիդ
4) նեգրոիդ

27 **Ո՞ր քաղաքը *չի* մտնում Հռենոս-Ռուր քաղաքային խոշոր կուտակման մեջ։**

1) Դյուսելդորֆ
2) Դորտմունդ
3) Դույսբուրգ
4) Դրեզդեն

28 **Ո՞ր ռեսուրսն է համարվում վերականգնվող։**

1) երկաթաքար
2) քամու էներգիա
3) անտառափայտ
4) արեգակնային էներգիա

29 **Աշխատանքի ո՞ր բաժանման ժամանակ են երկրները մասնագիտանում որևէ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման բնագավառում և համաշխարհային շուկայում դրանց արդյունքի փոխանակման մեջ։**

1) աշխարհագրական
2) հասարակական
3) միջշրջանային
4) միջազգային

30 **Ո՞ր երկիրը չի համարվում առաջատար համաշխարհային ածխարդյունաբերության մեջ։**

1) Չինաստան
2) Հնդկաստան
3) Վրաստան
4) Ռուսաստան

31 **Ինչո՞վ պայմանավորված չէ սև մետաղաձուլության մեջ զարգացող երկրների բաժնի մեծացումը։**

1) այդ երկրների վառելիքաէներգետիկ հարուստ պաշարները
2) սպառման ծավալների աճը
3) էկոլոգիապես վնասակար արտադրությունները դուրս բերելու և զարգացող երկրներ փոխադրելու միտումը
4) գիտական կենտրոնների առատությունը

32 **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն ունի ելք դեպի ծով։**

1) Չեխիա
2) Սլովակիա
3) Մոլդովա
4) Ռումինիա

33 **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առաջատար վարդի յուղի արտադրությամբ։**

1) Հունգարիա
2) Լեհաստան
3) Բուլղարիա
4) Բելոռուս

34 **Ստորև թվարկվածներից ո՞րն է երկրամաս։**

1) Սախա
2) Խաբարովսկ
3) Չեչնիա
4) Դաղստան

35 **Ստորև թվարկվածներից ո՞ր թերակղզին Հարավային Եվրոպայում չէ։**

1) Բալկանյան
2) Ապենինյան
3) Յուկատան
4) Պիրենեյան

36 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրի նավատորմիղն է գտնվում աշխարհի առաջին տասնյակում։**

1) Լեհաստան
2) Հունաստան
3) Չեռնոգորիա
4) Սլովենիա

37 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկիրը *չի* համարվում Բենիլյուքսի երկիր։**

1) Բելգիա
2) Նիդեռլանդներ
3) Դանիա
4) Լյուքսեմբուրգ

38 **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը մոտավորապես 82 տարի։**

1) Նորվեգիա
2) Նիգերիա
3) Նիկարագուա
4) Նամիբիա

39 **Քարտեզ 1-ում ո՞ր երկիրն է նշված Դ տառով:**

1) Հորդանան
2) Իրաք
3) Լիբանան
4) Քուվեյթ



Քարտեզ 1

40 **Քարտեզ 1-ում ո՞ր մայրաքաղաքն է նշված Ը տառով:**

1) Թբիլիսի
2) Անկարա
3) Թեհրան
4) Մասկատ

41 **Քարտեզ 2-ում Ա տառով ո՞ր լեռնաշղթան է նշված:**

1) Վարդենիսի
2) Զանգեզուրի
3) Արեգունու
4) Գեղամա

42 **Քարտեզ 2-ում Գ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Արարատի
2) Վայոց ձորի
3) Արմավիրի
4) Կոտայքի



Քարտեզ 2

43 **Ո՞ր լեռնագագաթը *չի* գտնվում Սասնա լեռներում։**

1) Ծովասար
2) Անդոկ
3) Մարութա
4) Ջիլո

44 **Ե՞րբ փլուզվեց ԽՍՀՄ-ը։**

1) 1988թ
2) 1989թ
3) 1990թ
4) 1991թ

45 **Ո՞ր հանքավայրում կա նեֆելինային սիենիտ։**

1) Սվարանց
2) Շվանիձոր
3) Հրազդան
4) Կապուտան

46 **Ո՞ր բնակավավայրում է դիտվել ամենացածր ջերմաստիճանը։**

1) Պաղակն
2) Մարտունի
3) Ախուրյան
4) Վարդենիս

47 **Ո՞ր կլիմայական գոտում են թափվում ամենաշատ տեղումները։**

1) Չոր ցամաքային
2) Բարեխառն լեռնային
3) Ցուրտ լեռնային
4) Ջյունամերձ լեռնային

48 **Ո՞ր գետն է սկիզբ առնում Արագածի ու Փամբակի լանջերից։**

1) Քասաղ
2) Ազատ
3) Ողջի
4) Վեդի

49 **Ո՞ր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներն են ապրում Լոռու մարզի Լերմոնտովո և Մեդովկա բնակավայրերում։**

1) հույներ
2) ռուսներ
3) եզդիներ
4) ասորիներ

50 **ՀՀ ո՞ր քաղաքն է գտնվում Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում։**

1) Սպիտակ
2) Ստեփանավան
3) Վանաձոր
4) Նոյեմբերյան

51 **Ո՞ր երկրներն են աղքատ ջրաէներգետիկ ռեսուրսներով։**

1) Կանադան և Տաջիկստանը
2) Սաուդյան Արաբիան և Չադը
3) Ռուսաստանը և Բրազիլիան
4) Վրաստանը և Նորվեգիան

52 **Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.**

1) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը
2) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը
3) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը
4) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը

53 **Ո՞ր երկիրն է առավել քիչ անտառապատ.**

1) Ռուսաստան
2) Ինդոնեզիա
3) Կանադա
4) Իրան

54 **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) սարքաշինությունը
2) պղնձաձուլությունը
3) կարի արտադրությունը
4) կոնյակի արտադրությունը

55 **Տրվածներից ո՞րը էրոզիայի առաջացման պատճառ *չէ*։**

1) անտառային տարածքների կրճատումը
2) խախտված հողերի վերականգնումը
3) արոտավայրերի գերարածեցումը
4) գետերի վարարումները։

56 **Գրել այն երկրների համարները, որոնք մտնում են աշխարհի առաջին տասնյակի մեջ մեքենաշինության զարգացվածությամբ։**

1) Չինաստան
2) Իրաք
3) Գերմանիա
4) Ճապոնիա
5) Աֆղանստան
6) Բանգլադեշ
7) Հնդկաստան
8) Ղազախստան

57 **Գրել այն երկրների համարները, որոնք կոշկեղենի գլխավոր արտադրողներն են։**

1) Չինաստան
2) Իտալիա
3) Գերմանիա
4) Իսպանիա
5) Ուզբեկստան
6) Տաջիկստան
7) Հնդկաստան
8) Ինդոնեզիա

58 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք հարուստ են վարելահողերով։**

1) Չինաստան
2) Իրան
3) Կանադա
4) Դանիա
5) Պակիստան
6) ԱՄՆ
7) Հնդկաստան
8) Ղրղզստան

59 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են կարտոֆիլի համախառն բերքով։**

1) Չինաստան
2) Օման
3) Արգենտինա
4) Կոնգո
5) Ռուսաստան
6) ԱՄՆ
7) Հնդկաստան
8) Վրաստան

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են սուրճի արտադրությամբ։**

1) Բրազիլիա
2) Կոլումբիա
3) Կանադա
4) Եթովպիա
5) Պակիստան
6) ԱՄԷ
7) Զամբիա
8) Ինդոնեզիա

61 **Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով։**

1) Չինաստան
2) Բրազիլիա
3) Շվեդիա
4) Բելգիա
5) Եգիպտոս
6) ԱՄՆ
7) Հնդկաստան
8) ՀԱՀ

62 **Տրված տարածաշրջանները դասավորել բնակչության թվաքանակի նվազման կարգով՝ 2022թ տվյալներով։**

1) Արևելյան Ասիա
2) Հարավային Ասիա
3) Հյուսիային Եվրոպա
4) Արևմտյան Եվրոպա

63 **Տրված ԱՄՆ նահանգները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ։**

1) Կալիֆորնիա
2) Ֆլորիդա
3) Արիզոնա
4) Տեխաս

64 **Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը, եթե դրանցից մեկը հս.լ.11°-ի վրա է, իսկ մյուսը՝ հվ.լ.10°-ի։**

65 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ.29° և արլ.ե. 115°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը մարտի 21-ի կեսօրին:

66 Օդի հարաբերական խոնավությունը 24 գ/սմ³ է, իսկ օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 60 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

67 Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե այնտեղ ընդհանրապես ապրում է 90 մլն. մարդ, իսկ կոնկրետ գյուղերում՝ 18 մլն. մարդ:

68 **Որքա՞ն է երկրի բնակչության տարեկան բացարձակ մահացությունը, եթե այնտեղ ապրում է 3 մլն մարդ, իսկ մահացության ցուցանիշը 6‰ է։**

69 **Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Արդյունաբերության մեջ մեծ տեղ են գրավում էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունը և քիմիական արդյունաբերությունը։
2) Շատ խիտ է բնակեցված Հյուսիսգերմանական դաշտավայրը։
3) Գերմանիան աշխարհի առավել քաղաքայնացված երկրներից է։
4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է։
5) Այստեղ է ձևավորվել Եվրոպայի ամենահզոր տրանսպորտային համակարգը։
6) Ռուրը աշխարհի խոշորագույն նավթային ավազաններից է։

70 **ՀՀ մարզերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Արագածոտնում է Մաստարայի սելավային գետակը։
2) Արմավիրի մարզի լեռնաշղթաներից են Ուրծը և Երանոսը։
3) Արարատի մարզում է Շամիրամի լավային սարավանդը։
4) Շիրակի մարզի գերխոշոր գյուղերն են Ախուրյանը և Ազատանը։
5) Լոռու մարզում է Շամլուղի պղնձահանքը։
6) Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքը հայտնի է գարեջրի արտադրությամբ։